ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԹԻՎ 15-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԹԻՎ 11-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի 2025 թվականի հոկտեմբերի 31-ի «Ոստիկանության գվարդիայի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 11-Լ հրամանով հաստատված հավելվածում՝

1) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Գվարդիայի տարածքային ստորաբաժանումները, բացառությամբ ուղեկցող սպայական վաշտի, ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց՝ հայերեն ու օտար լեզուներով անվանմամբ կլոր կնիք:».

2) 29-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Գվարդիայի տարածքային ստորաբաժանումների, բացառությամբ ուղեկցող սպայական վաշտի, հրամանատարներն իրենց իրավասության սահմաններում ընդունում են անհատական իրավական ակտեր:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ոստիկանության գնդապետ

Արամ Ղազարյան

08.12.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ